ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1699-Ն ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 113-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագիծ

_

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1699-Ն ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 113-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի <Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին>> N 1699-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման N1 հավելվածի 43-րդ կետի 3-րդ պարբերության <<եթե բնակավայրերում տվյալ ուղղությամբ գոտիների թիվը պակաս է երեքից (բնակավայրերից դուրս՝ երկուսից ոչ ավելի)>> բառերը փոխարինել <<եթե բնակավայրերում տվյալ ուղղությամբ գոտիների թիվը ավելի չէ երեքից (բնակավայրերից դուրս՝ ավելի չէ երկուսից)>> բառերով:

2) որոշման N3 հավելվածի 8-րդ կետի առաջին պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ <<Նշանների չափերը պետք է համապատասխանեն ԳՕՍՏ Ռ 52290-2004 ստանդարտի պահանջներին:>>:

3) որոշման N3 հավելվածի 44-րդ կետի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

- Մեծատառի հ մբարձրությունից կախված՝ լատինական և ռուսական այբուբեններով նշանների վրա տառանշման մակերեսի լայնությունը սահմանված է ԳՕՍՏ Ռ 52290-2004 ստանդարտով, իսկ հայկական

այբուբենով նշաններինը՝ ԳOUS 10807-78 ստանդարտով։։

2. ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի §Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոնները, ճանապարհային ցանկապատներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները, ուղղորդ սարքվածքներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները և արհեստական անհարթություններին ներկայացվող պահանջները և դրանց կիրառման կանոնները հաստատելու մասին։ N 113-Ն որոշման N1 հավելվածի 87-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ՝

- **Աղյուսակ 5. Գծանշման գծերի լայնությունը**

Երթևեկու-կության գոտիների քանակը	Բաժանիչ գոտու առկայու-թյունը	Հակադիր ուղղություններով հոսքերի բաժանումը, **մետր**					Երթևեկության գոտիների նշումը, **մետր**			Երթևեկե մասի եզ նշումը, **մ**	
		1.1	**1.3**	**1.5, 1.6**	**1.9**	**1.11**	**1.1, 1.5 1.7**	**1.9**	**1.11**	**1.2.1**	**1.**
2	Չկա	0,10	-	0,10	-	0,10	0,10	-	0,10	0,10	0,
3		0,15		0,15				0,10			-
4 և 5		-	0,15	-	0,15	(0,10)	0,15 (0,10)	0,15 (0,10)	0,15 (0,10)	0,15 (0,10)	
≥ **6**			0,20 (0,15)		0,20 (0,15)					0,20 (0,15)	
≥ **4**	Կա		-		-		0,15	-			

Փակագծերում նշված են բնակավայրերում գծանշման գծերի լայնության թույլատրելի նշանակությունները։։